## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
## ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ
# ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ
# Ն 05

Գրանցված է Համապատասխանության
գնահատման նշանակված մարմինների
գրանցամատյանում
28 դեկտեմբերի 2018թ.
№ Ն-05(H-05)2018
Ուժի մեջ է մինչև 06 նոյեմբերի 2019 թ.

Սույն վկայականը հավաստում է, որ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ «Լաբորատոր փորձարկման կենտրոն» փորձարկման լաբորատորիան համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի «Համապատասխանության գնահատման մարմինների նշանակման ընթացակարգը և չափանիշները հաստատելու մասին» N 623-Ն որոշմամբ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման համար սահմանված չափանիշներին և նշանակվել է որպես փորձարկում իրականացնող համապատասխանության գնահատման մարմին (ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի փետրվարի 28-ի № 149-Ա հրաման)՝ համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ N 043/T-043) N 1-A և N 1-B Հավելվածներով սահմանված հավատարմագրման ոլորտներում ընդգրկված արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի, ցուցանիշների և համապատասխան տեխնիկական կանոնակարգերով սահմանված փորձարկման (այդ թվում՝ նմուշառման) մեթոդը սահմանող փաստաթղթերի նշագրերի:

ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 49/4,

---

Էլ. հասցե: sarm@sarm.am Հեռ./ֆաքս: (+374 10) 28-56-20

---

(իրավաբանական անձի գտնվելու վայր, էլ. հասցե, հեռախոս, ֆաքս)

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ «Լաբորատոր փորձարկման կենտրոն» փորձարկման լաբորատորիայի նշանակման ոլորտը ներառում է արտադրանքի այն տեսակները, որոնց վրա տարածվում են ստորև ներկայացված ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերը՝

**ՀՀ տեխնիկական կանոնակարգեր**

1. ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1795-Ն որոշում - միայն ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի «3402» ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք:

2. ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի «Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 679-Ն որոշում միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «3924» ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք:

3. ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգ» № 1546-Ն որոշում - միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «4818», «9619 00» ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք:

4. ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի «Սինթետիկ հիմքով լաքերի և ներկերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» № 1647-Ն որոշում - միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «3208» և «3209» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք:

**ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգեր**

1. «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
2. «Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 007/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
3. «Խաղալիքների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 008/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
4. «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 009/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
5. «Հացահատիկի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 015/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
6. «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
7. «Մրգերից և բանջարեղեններից արտադրված հյութամթերքների տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 023/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
8. «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 024/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
9. «Սննդային հավելումների, բուրավետիչների և օժանդակ տեխնոլոգիական միջոցների անվտանգության պահանջների մասին» (ՄՄ ՏԿ 029/2012) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
10. «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 033/2013) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
11. «Մսի և մսամթերքի անվտանգության տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 034/2013) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Կ.Տ.

(ստորագրություն)